

**ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2013թ-ի
համայնքի ղեկավարի տարեկան**

Արմավիր համայնքի համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողական՝
2013թվականի տարեկան կտրվածքով առ.01.01.2013թ - 01.01.2014թ.

Եկամուտների տեսակը

Հողի հարկ	8595,3	100%
Գույքահարկ	2891,8	100%
Վարձակալական վ/վ	2040,0	100%
Դոտացիա	42769,0	100%
Տեղական տուրքեր	4747,3	100%
Սուբվենցիա	4964,7	100%
Ընդամենը վարչական բյուջե	66008,1	100%

Ծախսեր

Արմավիրի գյուղապետարանը 2013 թ-ի հունվար ամսից առ 01.01.2014թ-ի դրությամբ կատարել է հետևյալ ծախսերը:

- 1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 24955,0 հազ.դրամ
 - 2.անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 4935,0 հազ.դրամ
 - 3.Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 32011,5 հազ.դրամ
 - 4.Մանկապարեզ 4600,0 հազ.դրամ
 - 5.Արվեստի դպրոց 11609,0 հազ.դրամ
- Ֆոնդային բյուջեի ծախսերը 4051,8 հազ.դրամ.

1. Գործավարություն.

2013թ-ի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 300 գրավոր և բանավոր դիմումներ և առաջարկություններ,որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:Համայնքի բնակիչներին տրամադրվել են 450 տեղեկանքներ,բնութագրեր:Հղվել են 108 պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին:

2.Ավագանու գործունեություն.

2013 թ-ի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 6 հերթական և 7 արտահերթ նիստեր:Ավագանու քննարկմանն են ներկայացվել 10 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3.Գյուղատնտեսության ոլորտ.

• Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

- բնակավայրային նշանակության հողեր – 242,9 հա
- գյուղ.նշանակության հողատարածք – 417,11 հա,որից
խաղողի այգի – 52,66 հա
պտղատու այգի – 60,75 հա

Անասնազլխաքանակ.

առ.01.01.2014թ-ի դրությամբ համայնքում առկա են

խոշոր եղջերավոր անասուններ՝ 427 գլուխ, որից կովեր՝ 150 գլուխ

Մանր եղջերավոր անասուններ՝ 1100 գլուխ ոչխար,որից մայրեր՝ 825,չիչակներ՝ 275

խոզեր 100 գլուխ ,որից մայրեր՝ 50

Մեղվաընտանիք – 172

Թռչուններ – 1252

Ազգաբնակչություն.

ա/ համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3560 մարդ

2013 թ-ի ընթացքում Արմավիր համայնքում ծնվել է 43 երեխա,գրանցվել է 31 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 30 ընտանիք:

Համայնքում թոշակառուներ 400 մարդ:

5.Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց, որտեղ հաճախում են 345 աշակերտ և աշխատում են 46 աշխատող :Մեկ մանկապարտեզ,որտեղ հաճախում են 50 երեխա և աշխատում 11 աշխատող,մանկապարտեզը գործում է վեց ամսյա ժամկետով:Գործում է նաև Արվեստի դպրոց,որտեղ հաճախում են 50 երեխա և 14 աշխատող,դպրոցը գործում է ամբողջ տարվա կտրվածքով:

6.Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն՝ 5 աշխատող,գործող գրադարան՝ 1 աշխատող, ունի նաև սպորտի խմբակ որտեղ մարզվում են շուրջ 50 երեխա.

7.Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատակցով.

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2013 թ-ի գարնանային և աշնանային զինակոչը և կատարվել է պլան - առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հայաստանի Հանրապետության պետական տոները և հիշատակի օրերը:Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են դպրոցի ավարտական վերջին

զամգի միջոցառումները, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի տարելիցը, մարտի 8-ի և ուսուցչի օրվա տոները, կազմակերպվում է ամենօրյա տոնական հանդես, այցելություններ են անցկացվում զոհված ազատամարտիկների շիրիմներին.

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը:

Հատկացվել է տարբեր օգնություններ 2013թ-ի մայիսի 12-ի կարկտահարությունից տուժված տնտեսություններին.

10.ա/Համայնքի հիմնախնդիրներից առաջնային է համարվում մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը, որը դեռևս իրականացված չէ:

բ/խմելու ջրի խողովակների հիմնովին վերանորոգումը:

գ/եկեղեցու շինարարություն:

Արմավիր համայնքի
ղեկավար՝



Ռ.Ֆ.Մարգարյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի տարեկան հաշվետվությունը՝ 22.01.2014թ.-ին, ժամը 14-00-ին

Նախագահությամբ՝ Ռ.Ֆ.Մարգարյանի

Քարտուղարությամբ՝ Գ.Մ.Հովհաննիսյանի

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Վ. Աբրահամյանի

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու զեկուցմանը ներկա են գտնվում համայնքի ավագանու
անդամները, համայնքի հիմնարկ-ձեռնարկությունների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև
համայնքի 40 բնակիչներ:

Լսեցին- Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյանի 2013թվականի
տարեկան հաշվետու զեկույցը:


Պարոն՝ Ռ. Մարգարյանը հաշվետու զեկույցում ներկայացրեց 2013թ. Ընթացքում կատարած
աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականը, ինչպես նաև
համայնքում 2013թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտից 100o/o-ով տուժված համայնքի
բնակիչների հիմնախնդիրների մասին:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեցին համայնքի
բնակիչներ՝ Թադևոս Խաչատրյանը և Ասատուր Հայրապետյանը, որոնք շեշտը դրեցին հիմնականում
կարկուտահարությունից տուժված խաղողի բերքատու այգիների վերականգնման և մշակման վրա: Բացի
կարկուտը, այս տարի նպաստեց նաև ցրտաշունչ ձմեռը, որը չի բացառվում, որ մի քանի տարվա խաղողի
բերքի անկում տեղի ունենա: Նրանք ասացին նաև, որ Արմավիր գյուղի հիմնական եկամտի աղբյուրը
խաղողն ու կեռասն է, որի քիչ լինելու դեպքում դժվար կլինի հողի և ջրի վարձավճարների գանձմանը:

Արտահայտվեցին նաև համայնքի ավագանու անդամներ՝ Արմեն Մարգարյանը և Գևորգ Կարապետյանը,
որոնք նշեցին, որ իրոք այս դժվարին պայմաններից ելնելով համայնքում կատարվել է մի շարք
բարեփոխումներ, սակայն համանքը դեռևս ունի ցավոտ կողմեր՝ դրանցից են խմելու ջրի ջրագծերի
հիմնովին վերափոխումը և համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգումը: Հնարավորության
դեպքում համայնքում կառուցել նաև եկեղեցի:

Այնուհետև ելույթ ունեցավ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Վ. Աբրահամյանը, որը ասաց, Չնայած
այն բանին, որ համայնքը տուժվել 2013 թվականի մայիսի 12-ի կարկուտահարությունից, պետք է լավատես
լինեք և աջակցեք սեփական մուտքերին՝ հողի հարկի, գույքահարկի, ջրի վարձավճարների
հավաքագրման գործընթացին, որը կնպաստի բյուջեի կատարողականին և կկարողանան լուծել
համայնքի բաց թողնված խնդիրները:

Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Վ. Աբրահամյանը Արմավիր համայնքի ղեկավարի
2013թվականի տարեկան ներկայացրած հաշվետվությունը գնահատեց դրական:

Համայնքի ղեկավար՝  Ռ. Ֆ. Մարգարյան

Աշխատակազմ քարտուղար՝  Գ. Մ. Հովհաննիսյան

